
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, մայրենիի և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 81'373

**ՕՏԱՐ ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՍՈՒԼՈՒՄ
(2009-2013 թթ.)**

Բանալի բառեր և արտահայտություններ. բառային կազմ, մամուլ, փոխառություն, օտար բառեր, միջազգային բառաշերտ, բառակազմություն, սերող հիմք:

Ключевые слова и выражения: словарный состав, пресса, заимствованные слова, иноязычные слова, интернационализмы, словообразование, порождающая основа.

Key words and expressions: vocabulary, the press, loan word, foreign words, international wordstrip, derivation, generative basis.

Հասարակական կյանքի առաջընթացին զուգընթաց զարգանում է նաև լեզուն՝ կրելով փոփոխություններ իմաստային և քերականական մակարդակներում: Բառապաշարը իբրև լեզվի բաղկացուցիչ մաս, անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Գիտության, տեխնիկայի, արվեստի և հասարակական-քաղաքական կյանքում երևան եկած յուրաքանչյուր նոր երևույթ կամ առարկա ստանում է իր բառային արտահայտությունը, որի հետևանքով տեղի է ունենում լեզվի բառային կազմի հարստացում:

Այդ փոփոխությունները, մասնավորաբար օտար լեզուներից կատարված ներթափանցումներն ու օտար բառագործածությունները համալրում են լեզվի բառային մակարդակը՝ շատ հաճախ մերվելով լեզվի բառային կազմին: Նմանօրինակ փոփոխությունները գրական լեզուն կրողների կողմից դիտվում են որպես խոսքի ոճական գունավորման միջոց¹: Այդ բառերն ամենից առաջ ի հայտ են գալիս ԶԼՄ-ներում, մասնավորապես մամուլի օրգաններում:

Օտար կամ փոխառյալ բառերի օտարամուտ լինելը գիտակցվում է հանրության կողմից. դրանք սերում են ինչպես եվրոպական, այնպես էլ այլ

¹ Т. В. Матвеева, Полный словарь лингвистических терминов, Ростов -на -Дону, 2010, էջ 128.

լեզուներից և հայերենին են անցել թարգմանական գրականության միջոցով: Նորագույն շրջանում դրանք հայերենի մեջ թափանցել են հիմնականում ռուսերենի և անգլերենի միջնորդությամբ: Օտար բառերի մեջ առանձին շերտ են կազմում այն բառերը, որոնք ձևավորվել են հունալատինական արմատներով (հիմնական ձևույթներով) և գործածվում են բազմաթիվ լեզուներում: Դրանք հայերենին անցել են ռուսերենի և անգլերենի միջնորդությամբ և դիտվում են միջազգային բառաշերտի միավորներ²: Այլ կերպ ասած՝ դրանք միջնորդավորված օտարաբանություններ են:

Ժամանակակից մամուլում արձանագրված օտար բառագործածություններից մենք քննության նյութ ենք դարձրել այն օտար բառերը, որոնք վերաբերում են հասարակական-քաղաքական բառաշերտերին և մտնում են բառիմաստային ընդհանուր դաշտի մեջ:

Վերջին շրջանի (2009-2013թթ.) թերթերի դիտարկումների արդյունքում արձանագրում ենք հետևյալ նոր փոխառությունները կամ օտար բառագործածությունները:

Ապոլոգիա (апология <հուն. apologia. մեծարում) - «արդարացում քո հայացքների, մոտիվների համար»: Հմմտ. «Կարոտախտի քաղցր թույնը չի վկայում, թե նա այլևս նոր գեղեցկության հեռանկար չի տեսնում առջևում: Պարզապես նա հեռու է պոեզիային և մանավանդ պոետին մեսիական կարողություններով օժտելուց: Այդ պատճառով էլ, թերևս, իրավունք ունի ինքն իրեն հորդոր կարդալու. «Եղի՛ր կողքից քայլող» կամ «Մոսկ ականատես»: Սա անտարբերության *ապոլոգիա* չէ» [2, 11. 11. 09]:

Բուտաֆորիա (бутафория –իտալ. buttafouria. նմանեցված առարկաներ թատերական ներկայացումներում՝ իսկական առարկաների փոխարեն) - «շինծու, արհեստական, կեղծ»: Հմմտ. «Ուր ամսվա համար չարժե *բուտաֆորիա* դառնալ, ես այդքան կարճմիտ չեմ» [1, 018, 13. 05. 10]:

Գարանտ³ (гарант < ֆր. garant – երաշխավոր՝ պետություն, կազմակերպություն կամ ֆիզիկական անձ) - «երաշխավորող»: Հմմտ. «Նրան միջազգային հանրությունը հանդուրժել ու պահպանել է նախևառաջ որպես Ղարաբաղի *գարանտ*» [6, 18. 11. 11]:

² В. Д. Старичёнок, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008, էջ 218.

³ Բառիմաստների մեկնաբանությունները տրված են ըստ հետևյալ բառարանների. И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т.т. 1-2, Москва, 1958. И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1986, Словарь иностранных слов, Москва, 1988. Ս. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Երևան, 2011:

Դեֆոլտ (дефолт < անգլ. default – պարտականության չկատարելը) - «Ֆինանսական պարտավորություններից հրաժարվել»: Հմմտ. «Մակայն երբ 70-ականների սկզբին որոշ երկրներ պահանջեցին իրենց ունեցած դոլարները վերաձել ոսկու, ամերիկյան կառավարությունը հրաժարվեց դա անել և իր պարտավորությունների հանդեպ *դեֆոլտ* հայտարարեց» [1, # 044, 11. 03. 09]:

Դիլեր (дилер - անգլ. dealer – թվերի հետ խաղացող) - «գործարար, գործարքներ իրականացնող, բիզնեսմեն»: Օրինակ՝ «Դեռևս 2002 թվականին, արվեստի գործերի միջազգային *դիլեր* Մաքս Լենգը Դուբայում կազմակերպել էր Ուոքհոլի գործերի ցուցահանդես-վաճառք» [1, #006, 10. 06. 09]:

Դիվերտիսմենտ (дивертисмент < ֆր. divertissement – զվարճալիք) - «բալետային ներկայացում»: Այսօրվա դրությամբ խմբի խաղացանկում է *դիվերտիսմենտ* տարբեր բալետներից, այդ թվում Լյուդվիգ Մինկուսի «Դոն Կիխոտից» [1, # 012, 02. 09. 09]:

Իննովացիոն (инновация < լատ. in + novaitio – գիտության, տեխնիկայի, արվեստի բնագավառներում արվող նորարարություն) - «նորարարություն»: Հմմտ. «Հայաստանի կառավարությունը որոշել է գործուն միջոցներ ձեռնարկել Հայաստանում *իննովացիոն* տնտեսություն կարգացնելու ուղղությամբ» [1, # 018, 13. 05. 09]:

Կամիկաձե (камикадзе – ճապոն. kamikaze – աստվածային քամի. փխր. հայրենիքի համար ինքնազոհաբերություն կատարող) - «ինքնասպան ահաբեկիչ, տեռորիստ»: Հմմտ. «Ադրբեջանի գնահատմամբ. «Եթե նույնիսկ օդաչուն *կամիկաձե* էլ եղած լինի, ապա հատուկ սարքավորում կա, որը հենց որ նավի պաշարը կիսվում է, ավտոմատ հաղորդում է այդ մասին» [1, # 084, 7. 05. 09]:

Կոնֆիգուրացիա (конфигурация < լատ. configuratio – ելակետային ձև՝ վիճակ. որևէ բանի ընդհանուր տեսքը՝ ձևը) - «ձևաչափ, կառուցվածք»: Հմմտ. «Նա ունի ինչպես ասացինք՝ Ազգային անվտանգություն կուսակցություն, որի առաջին, անդրանիկ համագումարին լրագրողների հետ զրուցելիս ոչ ավել-ոչ պակաս երեք մատի *կոնֆիգուրացիա* արեց» [4, № 61, 9. 12. 11]:

Կրեդո (кредо – լատ. kredo – հավատում եմ) - «աշխարհայացք, սկզբունք»: Հմմտ. «Դավաճանությունը *կրեդո* դարձրածները այսպիսի՝ «վերևից» ուղղորդվող երիտասարդական շարժումները գործածում են գրեթե բոլոր ավտորիտար երկրներում [3, 4.10.10]:

Կուրատոր (куратор < լատ. curator – խնամակալ) - «խնամակալ, վերակացու»: Հմմտ. «...Բայց այն գաղափարը, որ ձևավորվել է ըստ

Վաշինգտոնի Ազգային պատկերասրահի *կուրատոր* Արթուր Ուիլքի, իր Ռեմբրանդի «մեղքով...» [1, # 118, 25. 11. 11]:

Նոնսենս (нонсенс – անգլ. nonsens < լատ. non – ոչ – sensus – միտք, իմաստ) – «անհեթեթություն»: Հմմտ. «Ըստ Աղաջանովի՝ Հայաստանի նման երկրի համար 2,3 տոկոսանոց բյուջետային դեֆիցիտը *նոնսենս* է» [3, 8. 12. 11]:

Պատրոնաժ (< патронаж < լատ. patronus – պաշտպան) – «հետաքրքրությունների շրջանակ»: Հմմտ. «*Պատրոնաժ* սահմանելը չի հանգեցնում քաղաքացու իրավունքների սահմանափակման» [4, № 614, 5.10.10]:

Սեգմենտ (сегмент < լատ. segmentum – կտոր, մաս, պատառիկ) – մաթեմատիկայում՝ «շրջանակի մաս, մի շրջան»: Հմմտ. Մփյուռքի ուսանողները մի փոքր այլ կարգի դժվարությունների են հանդիպում: Չնայած մեծ քանակությամբ հայ համալսարանականների առկայությանը՝ հայ համայնքում կա նաև բավական մեծ *սեգմենտ*, որը չի ստանում բարձրագույն կրթություն թե՛ ֆինանսական դժվարությունների, թե՛ շարժառիթների բացակայության պատճառով» [1, 4. 04. 10]:

Սուբլիմացիա (сублимация < լատ. sublimare – տանել, կրել) – «մաքրում»: Հմմտ. «Երբ մոսկովյան ստուդիայում գտնվող քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը շատ զուսպ և փաստարկված ձևով փորձում էր հակադրվել այդ անսքող քարոզչությանը, պարոնն ավելի բարկացավ և սկսեց գոռոգոալ, թե այդ ամենը *«սուբլիմացիա»* է [2, 11.11.10]:

Քաստինգ (кастинг – անգլ. kasting – որակագրկել, նախապես՝ ձիերին) – «ընտրությունների ժամանակ ձայների հաշվառում»: Հմմտ. «*Քաստինգ* եղել է, ու ընտրությունը կայացել է վերջին 2 տարիների մրցանակաբաշխության արդյունքներով» [7]:

Օմբուդսմեն (омбудсмен – շվեդ. ombudsmen – որևէ մեկի իրավունքների պաշտպան) – «մարդու իրավունքների պաշտպան»: Հմմտ. «Նա ցավով նշեց, որ մեզ մոտ այդ մեխանիզմը չկա, բայց և հայտնեց, որ իրենց ակումբը կոլեկտիվ *օմբուդսմեն* ստեղծելու նախաձեռնություն ունի, որին մասնակցում են հանրապետական և մարզային լրատվամիջոցները» [1, # 030, 18. 02. 02]:

Ֆետիշ (фетишизм < ֆր. fetichisme – անշունչ առարկաների՝ բնության երևույթների պաշտամունք, որևէ բան աստվածացնելը) – «կուրք»: Հմմտ. «ՀՀ իշխանությունները պետք է գնան դրան, որովհետև չի կարելի սեփական իշխանության պահպանումը դարձնել *ֆետիշ*» [1, # 014, 30. 09. 12]:

Աուցիդ – (ауцит < լատ. caedere – սպանել, մահ պատճառել) – Միրելու այդ անկարողությունը ... անփույթ ու անպատասխանատու է

դարձնում մարդուն Աստծու ամենաթանկ պարզև՝ իր կյանքի ու հոգու հանդեպ՝ հրահրելով *աուցիդի* (5. 05.06.2013):

Ապատիա (апатия < հուն. apatheia - անզգայություն), **էպատաժ** (эпатаж < ֆրանս. epatage - հասարակական կարգը խաթարող խայտառակ արարք) - Ծայրահեղության հակառակ բևեռում մեր ժամանակների սեռագարության վարակի այլընտրանքային շոշափուն է Բարոյակիներով հմայվող երիտասարդության *էպատաժի*, հիասթափության ու *ապատիայի* ... անզգիտակից զանգվածի ուռճացումն է (5. 05.06.2013):

Միներգիա – (синергия < հուն. synergeia - համագործակցություն) - Մեզանում մշակույթ-ազգ փոխներթափանցումը պատշաճ կերպով չի ընթանում. Տեղի չի ունենում «*միներգիա*»՝ փոխադարձ գորացում (5. 05.06.2013)

Իմիտացիա – (имитация < լատ. imitatio - նմանակում) - Հոդված գրելը պարզ *իմիտացիա* է, քան մեկնաբանության փորձ (5. 15.02.2013):

Պլագիատ – (լատ. plagiat - գրագող, գրագողություն) - Թերևս այս հեղինակին խորթ չէ *պլագիատը*, ինչի օրինակները բազում են (5. 15.02.2013):

Միներոմ (հուն. syndrome - ախտանիշների համակցություն) - Նրա հիվանդ միտքն ... բնութագրում է մի *միներոմ*, այսինքն՝ մոլորություն, որ ենթարկում է մարմնի մասերը ֆանտաստիկ անկարողության (5. 15.02.2013):

Էրոտոմանիա – [эротомания < հուն. erotos - սեր (+ mania) - հոգեբանորեն գրգռված վիճակ՝ ցանկասիրության հողի վրա] - Երևույթի հոգեբանական սկիզբը ուղեղային մորմոքն է՝ *էրոտոմանիայի* բարդությամբ (5. 15.02.2013):

Պոլեմիկա – (полемика < ֆրանս. polemique < հուն. polemikos - ռազմական, թշնամական) - «Անդրադարձի» ասելիքը խաղ-*պոլեմիկայի* տիրույթում է, որը «պատրանքային» է (5. 15.02.2013):

Պարանոյա – (паранойя < հուն. paranoia - խելացնորություն) - Ինչո՞ւ ենք զարմանում. սույնը իրապես «խաղում է» և հայտնվել է իր հորինած *պարանոյայի* թակարդում, հատել տխմարության եզրագիծը (5. 15.02.2013):

Մոնոֆիզմ – [снобизм < անգլ. snobysm - սնոբի (ազնվական խավին հատուկ բարձր ճաշակի տեր մարդու) վարքագիծ] - Ի վերջո շատ հավաքարարներ, պահակներ, բանջարավաճառներ ... մարդկանց վարկաբեկելու գավառամիտ *սնոբիզմից* հաստատ բարձր են (17. 05.02.2013):

Մուտացիա – (мутация < լատ. mutation - փոփոխություն) - Արդյոք վերոնշյալ աղավաղումները առավել տեսանելի չեն՞ դարձնում սույն երկխոսության «երևելի» ոչ միայն գենետիկ սկիզբը, այլև՝ *մուտացիաները* (17. 05.02.2013):

Կոնվուլսիա - (конвульсия < լատ. convulsio - ճոճել, ջղաձգվել) - Ն. Համբարձումյանի գործը կարելի է անվանել «մեկնաբանական իմիտացիա» (նախ՝ «Գրական հանդեսում», ապա՝ «Գ-Թ» սույն *կոնվուլսիայում*) (17. 05.02.2013):

Լոգոցենտրիզմ (логоцентризм < հուն. logos խոսք, միտք և centrum- կենտրոնացում) - «ուսմունք, որի կենտրոնում տրամաբանությունն է» - Դերիդան մի կողմից՝ պահպանում է ռացիոնալության նուրբ շերտերը, մյուս կողմից՝ անջատում է *լոգոցենտրիզմի* հոետորականությունից (17. 05.02.2013):

Ապորիա - (апория < հուն. aporia - դժվար լուծելի խնդիր) - Ջենոնի «Աքիլլեսն ու կրիան», ինչպես նաև «Նետը» տարբեր *ապորիաներ* են, և Աքիլլեսն ամեննին **նետ** չունի՝ «արագաթռիչ սլացքով» (17. 05.02.2013):

Քվազի - (квази... < լատ. quasi - կարծես, կարծես թե. բառ-մասնիկ՝ «նվազ, ոչ իսկական» իմաստներով) (տվյալ դեպքում՝ «անիրական մարդ») - Քանգի եթե *Քվազին* ուշադիր լինեք, ապա կտեսնեք, որ Դերիդայի համանուն գրքի խորագիրը ոչ թե Difference է, այլ՝ La Difference (17. 05.02.2013):

Այս և նման կարգի բառերը կամ դրանց մի մասը ժամանակի ընթացքում գործառական լայն հնարավորություններ ձեռք կբերի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեզանում այժմ էլ դրանց մի մասը գործածվում է հարադրությունների մեջ՝ կազմելով անվանաբայական և բայական հարադրությունների, ինչպես՝ *իննովացիոն մեթոդ, բրիֆինգ անցկացնել, ֆետիշ դարձնել, գարանտ կանգնել, իմիտացիա անել, կամիկաձե դառնալ* և այլն: Այս կարգի բառերը, իբրև օտար արմատներ, մասնակցում են նաև հայերենի բառակազմությանը՝ որպես սերող հիմքեր, հմտ. *ֆետիշ-ֆետիշացնել, սեզմենտ-սեզմենտավորել, կուրատոր-կուրատորություն* և այլն:

Օտար բառերի գործածությունը ժամանակակից մամուլում վկայում է լեզվական ներթափանցումների անշրջելի գործընթացի և նրա շարունակականության մասին, որի հետևանքով համալրվում է լեզվի բառային կազմը նորանոր միավորներով⁴:

⁴ Հոդվածն իբրև զեկուցում կարդացվել է Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրան 90-ամյակին նվիրված գիտաժողովում:

Ա. Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

1. «Ազգ», 2. «Առավոտ»: 3. «Ժամանակ», 4. «Չորրորդ իշխանություն», 5. «Գրական թերթ», 6. «www.akumb.am», 7. «www.mychayastan.am»:

Բ. Բառարաններ

1. Ա.Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Երևան, 2011:
2. И.Х.Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1986.
3. И.Х.Дворецкий, Древнегреческо-русский словарь, т.т. 1-2, Москва, 1958.
4. Т.В.Матвеева, Полный словарь лингвистических терминов, Ростов -на -Дону, 2010.
5. Словарь иностранных слов, Москва, 1988.
6. В.Д.Старичёнок, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

Մ. Միրումյան

**Օտար բառագործածություններ ժամանակակից մամուլում
Ամփոփում**

Հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները անմիջականորեն արտացոլվում են լեզվի բառային կազմում, որի հետևանքով հարստանում է լեզվի բառապաշարը:

Փոխառություններն ու օտար բառերը ամենից առաջ կիրառվում են ԶԼՄ-ներում, և, հետևաբար, մամուլի օրգաններում: Մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել այն օտար բառագործածությունները, որոնք վերաբերում են լեզվի հասարակական-քաղաքական բառաշերտին և կազմում են միևնույն իմաստային խումբը: Օրինակ՝ *դիլլեր*, *օմբուսմեն*, *կամիկադե*, *սեզմենտ*, *կրեդո*, *նոնսենս*, *դեֆոլտ*, *բրիֆինգ*, *պատրոնաժ*, *իննովացիոն*, *քաստինգ*, *ապոլոգիա*, *սուբլիմացիա* և այլն:

М. Мирумян

**Иностранные словоупотребления в современной прессе
Резюме**

Изменения, происходящие в общественно-политической жизни, сразу же отражаются в лексике языка, вследствие чего происходит обогащение его словарного состава.

Займствования из иностранных языков и иностранные словоупотребления прежде всего оказываются в СМИ и, в частности, в

органах печати. Мы сделали предметом исследования те иностранные словоупотребления, которые относятся к общественно-политическому словарному слов и входят в одну и ту же семантическую группу. Например, *диллер, омбудсмен, камикадзе, сегмент, кредо, нонсенс, дефолт, брифинг, патронаж, инновационный, кастинг, апология, сублимация* и т.д.

M. Mirumyan

Foreign Use of Words in Modern Press

Summary

The changes in socio-political life are reflected in the word-stock consequently enriched in the given language.

Particular, the interferences from foreign languages and the foreign use of words emerge first of all in Mass Media, in particular, press. The theme and factual object of our analysis are the foreign use of word reffering to the sociopolitical vocabulary layer and enter the general semantic field of words, for instance, *dealer, ombudsman, kamikadze, segment, credo, nonsense, default, briefing, patronage, innovation, casting, apology, sublimation* ect.

This class of word or certain part of them is likely to gain ground in the course of time and get almost absolutely assimilated with the native Word-Stock.